ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-23/40 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«09» «մատրի» 2023թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության ներուժի ներգրավման բաժնի պետ՝ Ամալյա Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության ներուժի ներգրավման բաժնի ավագ մասնագետ՝ Արփինե Շահինյան

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության ներուժի քարտեզագրման և հաշվառման բաժնի մասնագետ՝ Թագուհի Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-23/40» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-23/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. մարտի 6-ը ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. մարտի 7-ին ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	«ԱՐ ԵՎ ԱՐՏ» ՍՊԸ	+37499775506	01280472
2	«Մեդիա սիսթեմս» ՍՊԸ	+37460689090	00121294
3	Ա/Ձ Ջանիկ Սևոյան	+37494800059	37488172

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.**

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

3.2.1 «Ար և Արտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության երրորդ պարբերության մեջ բացակայում է էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ չորրորդ պարբերության 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/:

3.2.2 «Մեդիա Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ ընթացակարգի ծածկագիրը, Պատվիրատուի անվանումը և չափաբաժնի համարը սխալ է լրացված, երրորդ պարբերության մեջ բացակայում է էլեկտրոնային փոստի հասցեն, բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ կայքէջի հղումը, թերի է լրացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-23/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել մասնակիցներին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի մարտի 13-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Ամալյա Կարապետյան	
Անդամներ՝	Արփինե Շահինյան	
	Թագուհի Սահակյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	